1P046

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«20» 11 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 165-26

Նախաձեռնող՝ ***«ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ***
Երևան, Ռոստովյան 9

Գործունեություն ***Երկրաբանական ուսումնասիրություն***
Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Վարդահովիտ բնակավայր

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 165 - 26

«20» 11 **2026թ.**

Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում 2026–2028 թվականներին մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Վարդահովիտ բնակավայր

Ներածական մաս. Վարդենիսի բազմամետաղների հանքերևակումը գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի վարչական տարածքում, Գետիկվանք բնակավայրից 7 կմ, Վարդահովիտից 8.5 կմ, Եղեգնաձոր բնակավայրից 40 կմ հեռավորությունների վրա: Հանքերևակման տարածքը տեղակայված է 2430-3250 մ բացարձակ բարձրությունների վրա:

Ըստ կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության՝ հայցվող տարածքի հողերը ներկայացված են գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի(այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է կատարել որոնողագնահատողական աշխատանքներ Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման մոտ 46.14 կմ² (4614,2 հա) տեղամասում: Տեղամասի հետախուզումն որոշվել է իրականացնել երկրաբանական երթուղիների անցման, երկրաբանաքարտեզագրման աշխատանքների իրականացման, երկրաֆիզիկական հանութագրման և մեխանիկական ցունակային հորատանցքերի հորատման միջոցով:

Ընդերքօգտագործման տարածքի ծայրակետերի կոորդինատներն են ARM WGS-84 միասնական համակարգով.

N	Y	X		N	Y	X
1	8541718.7681	4421686.4229		21	8547125.4068	4431109.4383
2	8541524.3985	4422273.2899		22	8547135.1915	4430835.4684
3	8541372.4366	4422577.6687		23	8547140.1545	4430696.5028
4	8541174.5327	4422999.9873		24	8547155.7149	4430260.8122
5	8541042.0081	4423137.7001		25	8547288.3765	4429971.2116
6	8540836.3939	4423375.2215		26	8547288.6565	4429970.6005
7	8540772.3002	4423457.9414		27	8548221.7544	4427933.6456
8	8540294.9352	4423835.5180		28	8548931.1822	4427380.8445
9	8540916.1070	4426202.7573		29	8549432.7865	4426762.1989
10	8542462.7301	4427798.2185		30	8549590.7910	4425776.4023
11	8543359.7865	4428718.3585		31	8548129.5968	4424603.5520
12	8544735.0683	4428243.5455		32	8548083.0109	4424128.1853
13	8545343.0820	4428363.8385		33	8546375.5370	4424383.3368
14	8545553.5742	4428672.3301		34	8545925.4828	4423793.0528
15	8545556.8658	4428847.4978		35	8545182.6968	4423183.0966
16	8545328.2653	4429101.4984		36	8544801.9555	4422821.6314
17	8545580.1492	4429721.6829		37	8543718.6779	4421750.3334
18	8545811.6722	4429732.7415		38	8542438.5420	4421489.0810
19	8546022.1486	4430956.1420		1	8541718.7681	4421686.4229
20	8547125.7809	4431116.8964				

Ուսումնասիրության աշխատանքները կիրականացվեն 2 փուլով՝ 1-ին փուլը կընդգրկի որոնողագանահատողական աշխատանքների կատարումը, որի ժամանակ հանքային մարմինները կուսումնասիրվեն երկրաբանաքարտեզագրման և երկրաֆիզիկական աշխատանքներով, ինչպես նաև հորատահանուկային հորատանցքերի հորատման միջոցով, որոնց արդյունքներով կտրվի օգտակար հանածոների գնահատականը P կարգով, իսկ 2-րդ փուլը նախատեսվում է սկսել 1-ին փուլի աշխատանքների դրական արդյունքներ ստանալու դեպքում, որի ընթացքում հետախուզական ցանցի խտացման միջոցով կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկ C_1 և C_2 արդյունաբերական կարգով:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքի և սահմանների ճշտման համար նախատեսվում է անցնել 920 կմ երթուղիներ 46,14 կմ^2 մակերեսի վրա:

2026-2028 թվականներին նախատեսվում է հորատել մինչև 15 նոր հորատանցք, որոնց միջին խորությունը կկազմի 400 մ՝ ընդհանուր 5000-6000 մ: Դրանց համար անհրաժեշտության դեպքում կպատրաստվի 15 հորատահրապարակ՝ յուրաքանչյուրը 50 մ^2 մակերեսով, և կբացվի մինչև 3 կմ նոր ճանապարհ: 15 հորատահրապարակների համար հանույթը նախատեսվում է, 750 մ^2, իսկ վերականգնման ենթակա հողաշերտի ծավալը 1800 մ^3: Հորատումը կատարվելու է տարբեր ազիմուտներով և անկյուններով:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS 02543163 ՀՀ ԵՐԵՎԱՆ ՀՆՈՒՄ ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO ՀՀ ԵՐԵՎԱՆ ՀՆՈՒՄ

Աշխատանքների ընթացքում հողի բերրի շերտի ամբողջ ծավալը հանվելու և ժամանակավորապես պահեստավորվելու է, հետագայում հրապարակների ռեկուլտիվացիայի համար:

Երկրաբանական երթուղիները կուղեկցվեն բեկորային նմուշների վերցմամբ բնական մերկանցումներից և արմատական ապարների էլյուվիալ-դելյուվիալ մեծաբեկոր թափվածքներից: Էտալոնային կոլեկցիայի և թափանցիկ ու ողորկված հղկուկների պատրաստման համար զուգահեռ վերցվելու են նմուշներ (ընդամենը վերցվելու է ապարի և հանքակտորային 20-ական նմուշներ):

Հայցվող տարածքի համար նախատեսվում է կատարել մագնիսական ախրոհանույթ՝ ընդհանուր 920 գծ. կմ երկարությամբ ուղեգծերով:

Գրավիտացիոն հանույթի օգնությամբ կազմվելու են լեռնային ապարների խտությունների տեղաբաշխման քարտեզներ: Ընդհանուր առմամբ չափումները կիրականացվեն հայցվող տարածքի ողջ մակերեսով մինչև 600 կետերում:

Հորատումը կատարվելու է ժամանակակից եռսյունակային և երկսյունակային հորատման սարքերով (Atlas Copco CS 14 կամ նմանատիպ հորատող մեքենան):

Բոլոր հորատահանուկները ենթարկվելու են գեոտեխնիկական փաստագրման և հորատահանուկների արկղերը ենթարվելու են համապատասխան նշագրման:

Ստացված բոլոր նմուշները (հանուկային, կրկնակ, «Դատարկ», ստանդարտ) ենթարկվելու են լաբորատոր հետազոտությունների ALS ROMANiA SRL միջազգային լաբորատորիայում: Նախատեսվում է վերցնել բեկորային՝ 150 նմուշ, հորատահանուկային՝ 3000 նմուշ, անալիտիկ հսկողական՝ 240 նմուշ: Ընդամենը՝ 3390 նմուշ: Ծավալային զանգվածի համար վերցված նմուշները նույնպես փորձարկվելու են ALS ROMANIA SRL լաբորատորիայում:

Ստացված նմուշները (հանուկային, կրկնակ) ենթարկվելու են լաբորատոր հետազոտությունների: Դաշտային աշխատանքների ընթացքում պարբերաբար (15-20 օրը մեկ) նախատեսվում է իրականացնել ռադիոչափիչ (СРП-68-02) էտալոնացում և զգայունության ստուգում:

Ռեկուլտիվացիայի ենթակա հողի ընդհանուր մակերեսը կազմելու է 9750 մ^2 իսկ ծավալը 1950 մ^3 որտեղ, մասնավորապես՝ հրապարակ՝ 750 մ^2, 150 մ^3, ճանապարհ՝ 9000 մ^2 , 1800 մ^3:

Հորատման հրապարակները և ճանապարհները հորատումից հետո վերականգնվելու են: Աշխատանքները կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիայի աշխատանքների արժեքը կազմելու է 2 268 262.5 ՀՀ դրամ:

Խմելու ջուրը նախատեսվում է մատակարարել խմելու ջրի համար նախատեսված տարաներով: Կեղտաջրերը հավաքվելու են շարժական զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով:

Տեխնիկական նպատակներով օգտագործվող ջուրը, հաշվի առնելով աշխատանքների բնույթը և ջրի պահանջարկի սահմանափակ ծավալները, ձեռք կբերվի համապատասխան համայնքից կամ իրավասու ջրամատակարարից՝ պայմանագրային հիմունքներով և ավտոցիստեռնով կտեղափոխվի աշխատանքների իրականացման վայր: Բնական մակերևութային կամ ստորերկրյա ջրային ռեսուրսներից անմիջական ջրառ չի նախատեսվում:

Կենցաղային աղբը հավաքվելու է հատուկ անթափանց պոլիէթիլենային տոպրակների մեջ (մինչև 30լ տարողությամբ), ընկերության սեփական ավտոտրանսպորտով տեղափոխվելու է մոտակա աղբավայրը:



Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ տարածքում, այն հատվածում, որտեղ հորատանցքեր փորել չեն նախատեսվում հայտնաբերվել է Սմիրնիոպսիս հայկական բուսատեսակը՝ պտղակալած վիճակում: Մյուս տեսակների առկայությունը հաստատելու համար անհրաժեշտ են լրացուցիչ այցելություններ գարնանը և վաղ ամռանը, որոնք իրականացվելու են ընկերության միջոցներով և ծրագրի մոնիթորինգի շրջանակներում: Հայցվող տարածքում առկա են ՀՀ Վայոց ձորի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակում հաշվառված «Բնակատեղի Ջանի» (պետական ցուցիչ՝ 9.41.1), «Խաչքար Սմբատի» (պետական ցուցիչ՝ 9.41.2), «Խաչքար» (պետական ցուցիչ՝ 9.41.3), «Ջրաղաց» (պետական ցուցիչ՝ 9.41.4) և մի շարք նորահայտ հնագիտական օբյեկտներ (ամրոց–բնակատեղի, քարայր–կացարաններ, գերեզմաններ և այլն):

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվել են փոշենստեցման, կենցաղային աղբի տեղափոխման, կեղտաջրերի հավաքման, կենսաբազմազանության պահպանման վերաբերյալ բնապահպանական միջոցառումներ:

Աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունը նախատեսել է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, ինչի համար նախատեսված է որոշակի գումար:

Պատճառաբանական մաս. Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում 2026–2028 թվականներին մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է օրենքին համապատասխան: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Վայոց ձորի մարզպետարանը, Եղեգիսի համայնքապետարանը, ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը: ՇՄԱԳ հաշվետվությունը բազմաթիվ առաջարկություններով, դիտողություններով, ուղարկվել է «ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ-ին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունում առկա է անհամապատասխանություն՝ կապված լեռնային փորվածքների հետ: Ընկերության կողմից ներկայացված պարզաբանումների համաձայն բաց լեռնային փորվածքներ չեն նախատեսվում և ռեկուլտիվացիայի առանձին ծավալ չի հաշվարկվել վերջինիս համար, մինչդեռ հաշվետվությունում և ծրագրի տարբեր բաժիններում նշված են հակասական տեղեկություններ՝ նոր հետախուզառուների կամ բաց լեռնային փորվածքների վերաբերյալ, ինչի արդյունքում այդ տարածքների համար ծավալներ և ռեկուլտիվացիոն ծախս չի հաշվարկվել:

Ընկերության կողմից չի ներկայացվել ճշտված տեղեկատվություն և քարտեզագրական նյութեր հորատանցքերի տեղադիրքերի վերաբերյալ՝ ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու նպատակով /քանի որ վերջինով պայմանավորված ԲՓ 0185-22 պետական փորձաքննական եզրակացությամբ ամրագրված են եղել պահանջներ ՀՀ Կառավարության 20 հունվարի 2005 թվականի թիվ 64-Ն «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» որոշման պահանջների ապահովման նպատակով:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

ԿԳՄՍ նախարարության կողմից ստացված կարծիքի համաձայն՝ հայցվող տարածքում առկա են ՀՀ Վայոց ձորի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակում հաշվառված «Բնակատեղի Ջանի» (պետական ցուցիչ՝ 9.41.1), «Խաչքար Սմբատի» (պետական ցուցիչ՝ 9.41.2), «Խաչքար» (պետական ցուցիչ՝ 9.41.3), «Ջրաղաց» (պետական ցուցիչ՝ 9.41.4) և մի շարք նորահայտ հնագիտական օբյեկտներ (ամրոց–բնակատեղի, քարայր–կացարաններ, գերեզմաններ և այլն), որոնց տարածքները չեն արտացոլվել քարտեզագրական նյութերում ու հնարավոր չէ ներկայացված կից նյութերից գնահատել հնարավոր ռիսկերն ու բացասական ազդեցությունների չափը և սահմանել համապատասխան պահպանական միջոցառումներ: Առաջարկվել է լրամշակված ՇՄԱԳ հաշվետվությունը կրկին ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարության քննարկմանը: Հարկ է նշել, որ նշվածի վերաբերյալ ընկերությանը տեղեկացվել է նաև 2-րդ հանրային լսման ժամանակ:

Վայոց Ձորի մարզպետարանից ստացված կարծիքի համաձայն՝ Վայոց ձորի մարզի ջրային ռեսուրսների մի մասը կուտակվում է հանքերևակման ուսումնասիրության տարածքում, որտեղից էլ հոսում է դեպի Արփա-Սևան և Հերմոն-Ելփին (Խանջյան առու) բարձր և ցածր ճնշման խողովակներով ապահովելով Եղեգիս, Արենի և Եղեգնաձոր համայնքների և բնակավայրերի սեփականաշնորհված, տնամերձ հողատարածքների ջրամատակարարումը: Կարծիքում նշվել է, որ հանքերևակման ուսումնասիրության տարածքն ամբողջությամբ ալպյան և ենթալպյան բարձր կարգի արոտավայրեր են, որտեղ Վայոց ձորի և Արարատի մարզերի անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների կողմից (5-6 ամիս) արոտներ են տեղափոխվում 4-4.5 հազար գլուխ խոշոր և 8-10 հազար գլուխ մանր եղջերավոր կենդանիներ: ՀՀ կառավարության 2021-2026 թվականների զարգացման ռազմավարությամբ սահմանված՝ Վայոց ձորի միկրոռեգիոնալ (1, 2, 3, 4, 5, 6) համայնքների համաչափ զարգացման դրույթներում ներառված է Եղեգիս համայնքի ուղղվածությունը (բուսաբուծություն, այգեգործություն, անասնապահություն, ագրո և էկոտուրիզմ): Մարզպետարանի գրությամբ նշվել է, որ Եղեգիս համայնքում իրականացվում են տուրիզմի զարգացմանն ուղղված լուրջ ներդրումային ծրագրեր:

Փորձաքննության ընթացքում ուսումնասիրվել և հաշվի են առնվել նախատեսվող գործունեության վերաբերյալ Եղեգիս համայնքի ավագանու անդամների, 2-րդ հանրային լսման մասնակիցների, հանրության կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների, ինչպես նաև փորձաքննական գործընթացում ստացված գրավոր դիմումները, բողոքները՝ հաստատված ստորագրություններով: Բողոքները հիմնականում եղել են բնապահպանական՝ վերաբերել են ջրային ռեսուրսների պահպանությանը, բնակչության կենսապայմաններին, ավագանու որոշմանը, գյուղատնտեսական նշանակության տարածքների (արոտավայրերի) օգտագործմանը, պատմամշակութային ժառանգության և շրջակա միջավայրի վրա ազդեցություններին:

Փորձաքննական գործընթացում «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից իրականացվել են տեղազննման աշխատանքներ ՇՄԱԳ հաշվետվությունում առկա տեղեկատվության և փաստացի իրավիճակի հետ համապատասխանությունը պարզելու նպատակով: Տեղազննման ընթացքում իրականացվել է տարածքի GPS համակարգով գրանցում և լուսանկարում: Տեղազննման արդյունքում պարզվել է, որ տարածքը հարուստ է ջրահոսքերով: Առկա են խմելու ջրի աղբյուրներ, որտեղից ջրերը հոսելով խառնվում էր հորատանցքերի հարևանությամբ հոսող ջրերին:

2026 թվականի հոկտեմբերի 29-ին Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրում կայացած հանրային լսումն ընթացել է խիստ լարված մթնոլորտում՝ ուղեկցվելով մասնակիցների միջև բուռն քննարկումներով, տարաձայնություններով, վիճաբանություններով:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO OF THE MINISTRY OF ENVIRONMENT OF THE RA

Հանրային լսման ընթացքում մասնակիցների կողմից բարձրաձայնվել են նախատեսվող գործունեության իրականացման և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների վերաբերյալ բազմաթիվ մտահոգություններ, առարկություններ և անհամաձայնություններ: Մասնավորապես, քննարկվել են նախկինում իրականացված աշխատանքների, համայնքի խմելու և ոռոգման ջրերի աղբյուրների, բնության պահպանության, հնարավոր ազդեցությունների հետ կապված հարցեր:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները, «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի դրույթները և հիմք ընդունելով Օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասը «ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ» ՍՊԸ -ի կողմից փորձաքննության ներկայացված Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում 2026–2028 թվականներին մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան